

**Կենցաղային ոչ ուղղորդված լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների
վերաբերյալ Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 244/2009
կանոնակարգը կիրարկող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005/32/ԵՀ
հրահանգ**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 076, 24/03/2009թ., էջ 0003 - 0016

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիս 6-ի 2005/32/ԵՀ հրահանգը, որն էներգիա օգտագործող ապրանքների համար էկոնախագծմանը ներկայացվող պահանջների օրենսդրական դաշտ է ստեղծում և փոփոխում է Խորհրդի 92/42/ԵՏՀ հրահանգը և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի [1] 96/57/ԵՀ և 2000/55/ԵՀ հրահանգները, մասնավորապես դրանց 15(1) հոդվածը, էկոնախագծման հարցերի վերաբերյալ խորհրդատվական ֆորումի հետ խորհրդակցելուց հետո,

Քանի որ

- 1) 2005/32/ԵՀ հրահանգի համաձայն էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգիա օգտագործող արտադրատեսակների համար, որոնք ունեն իրացման մեծ ծավալներ, նշանակալից ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա և մեծ ներուժ ունեն շրջակա միջավայրի վրա ավելի քիչ ազդեցություն ունենալու առումով՝ չպահանջելով չափազանց մեծ ծախսեր,
- 2) 2005/32/ԵՀ հրահանգի 16(2) հոդվածի առաջին պարբերույթը նախատեսում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի և 15(2) հոդվածով սահմանված չափանիշների համաձայն և էկոնախագծման հարցերի վերաբերյալ խորհրդատվական ֆորումի հետ քննարկելուց հետո, Հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում կիրարկման միջոց ներմուծի լուսավորող կենցաղային սարքերի վերաբերյալ,
- 3) Հանձնաժողովը իրականացրել է նախնական ուսումնասիրություն՝ վերլուծելով սովորաբար կենցաղային պայմաններում օգտագործվող լուսավորող սարքերի

տեխնիկական, բնապահպանական և տնտեսական հայեցակետերը: Ուսումնասիրությունը մշակվել է Համայնքի և երրորդ երկրների շահագրգիռ կողմերի հետ համատեղ և արդյունքները հրապարակվել են Հանձնաժողովի ԵՎՐՈՊԱ ինտերնետային կայքէջում,

4) էկոնախագծմանը ներկայացվող պարտադիր պահանջները վերաբերում են այն արտադրատեսակներին, որոնք գտնվում են Համայնքի շուկայում, որտեղ էլ որ դրանք տեղադրվեն կամ օգտագործվեն, այդ պատճառով նման պահանջները չեն կարող փոփոխվել, ելնելով այն հանգամանքից, թե արտադրատեսակը որտեղ է օգտագործվում (ինչպես օրինակ կենցաղային լուսավորումը),

5) սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակները նախատեսված են հիմնականում տան սենյակի լրիվ կամ մասնակի լուսավորման համար՝ փոխարինելով կամ լրացնելով բնական լույսը արհեստական լույսով, բարելավելով այդ տարածքում տեսանելիությունը: Հատուկ նշանակության լամպերը, որոնք նախատեսված են հիմնականում այլ տեսակի կիրառության համար (ինչպես օրինակ երթևեկության ազդանշանները, տերարիումների լուսավորությունը կամ տնային սարքավորումները) և որոնց նման կիրառության մասին հստակ նշված է ապրանքի վերաբերյալ տեղեկատվության մեջ, չպետք է ենթակա լինեն սույն Կանոնակարգով սահմանված էկոնախագծմանը ներկայացվող պահանջներին,

6) շուկայում ի հայտ եկող նոր տեխնոլոգիաները, ինչպիսին են լուսարձակ դիոդները պետք է ենթակա լինեն սույն Կանոնակարգին,

7) կարգավորվող արտադրատեսակների կողմից շրջակա միջավայրին վերաբերող, սույն Կանոնակարգի նպատակներից ելնելով կարևոր համարվող հարցերն են օգտագործման փուլում էներգիան, ինչպես նաև սնդիկի պարունակությունը և արտազատումը,

8) սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակներին առնչվող էլեկտրականության տարեկան սպառումը 2007 թվականին գնահատվել է 112 տեռավատ/ժամ, որը հավասար է 45 մտ CO₂-ի արտանետումներին: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, կանխատեսվում է, որ սպառումը 2020 թվականին կաճի մինչև 135 տեռավատ/ժամ: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակների կողմից էլեկտրականության սպառումը կարող է զգալիորեն կրճատվել,

9) սնդիկը, որն արտանետվում է լամպերի օգտագործման տարբեր փուլերում, ներառյալ էլեկտրաէներգիայի արտադրության օգտագործման փուլերի և սնդիկ պարունակող 80% կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերից, որոնք ենթադրվում է, որ չեն վերամշակվում

օգտագործվելուց հետո, 2007 թվականին սահմանվել է տեղակայված լամպերի պաշարներից 2.9 տոննա: Եթե հատուկ միջոցներ չձեռնարկվեն, տեղադրված լամպերի պաշարների սնդիկի արտանետումները կանխատեսվում է, որ 2020 թվականին կաճեն մինչև 3.1 տոննա, մինչդեռ հաստատվել էր, որ այն կարող է զգալիորեն նվազեցվել: Չնայած կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի սնդիկի պարունակությունը համարվում է էկոլոգիական կարևոր ասպեկտ, այն անհրաժեշտ է կանոնակարգել Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 27-ի «Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումներում որոշ վտանգավոր նյութերի օգտագործման սահմանափակման մասին» 2002/95/ԵՀ հրահանգով: Սույն Կանոնակարգի ենթակա էներգախնայողության պահանջների սահմանումը կհանգեցնի սնդիկի արտանետումների ընդհանուր նվազեցմանը,

10) «Թափոնների էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների մասին» [3] 2003 թվականի հունվարի 27-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002/96/ԵՀ հրահանգի 10(1)(դ) հոդվածը պետք է ամբողջությամբ իրականացվի՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության նկատմամբ պոտենցիալ վտանգների նվազեցումը կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի պատահական կոտրվելու կամ օգտագործման համար ոչ պիտանի լինելու դեպքում,

11) սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակների կողմից էլեկտրականության սպառման բարելավումը պետք է իրականացվի՝ կիրառելով գոյություն ունեցող ծախսարդյունավետ չարտոնագրված տեխնոլոգիաները, որոնք հանգեցնում են սարքավորումների գնման և օգտագործման համար համընդհանուր ծախսերի նվազեցմանը:

12) սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով ազդեցություն կրող արտադրատեսակների՝ շրջակա միջավայրի առումով արդյունավետության բարելավումը, նպաստելով ներքին շուկայի գործունեությանը և համայնքի՝ 2020 թվականին էներգիայի սպառումը 20%-ով նվազեցնելու, համեմատելով այն ցուցանիշի հետ, որն առկա կլինեի նույն տարում առանց միջոցներ ձեռնարկելու, նպատակի իրականացմանը,

13) սույն Կանոնակարգը պետք է ավելացնի շուկայում սույն Կանոնակարգի ենթակա արդյունավետ էներգակիր արտադրատեսակների ներթափանցումը՝ հանգեցնելով 2020 թվականին 39 տեռավատ/ժամ էներգիայի խնայողությանը, համեմատելով այդ տարում

էներգիայի խնայողության ցուցանիշի հետ, եթե էկոնախագծմանը վերաբերող միջոցներ չձեռնարկվեն:

14) էկոնախագծմանը վերաբերող պահանջները չպետք է օգտագործողի տեսանկյունից ներազդեն ֆունկցիոնալ հատկությունների վրա և չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, օգտագործման փուլում էլեկտրականության սպառման նվազեցման օգուտը պետք է փոխհատուցի սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակների արտադրության ժամանակ շրջակա միջավայրի նկատմամբ լրացուցիչ պոտենցիալ ազդեցությունը, եթե առկա է նման ազդեցություն,

15) էկոնախագծին վերաբերող պահանջների փուլ առ փուլ ուժի մեջ մտնելը պետք է արդյունավետ ժամանակահատված սահմանի արտադրողների համար՝ պատշաճ կերպով վերանախագծելու սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակները: Փուլերի իրականացման ժամանակահատվածը պետք է սահմանվի այնպես, որ խուսափվի շուկայում առկա սարքավորումների գործունեությանն առնչվող բացասական ազդեցությունը և հաշվի առնվի վերջնական օգտագործողների և արտադրողների ծախսերի ազդեցությունը մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում՝ ապահովելով սույն Կանոնակարգի նպատակների ժամանակին իրականացումը,

16) համապատասխան արտադրատեսակների պարամետրերի չափումները պետք է իրականացվեն հաշվի առնելով ընդունված համընդհանուր չափման մեթոդները. արտադրողները կարող են կիրառել 2005/32/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածով սահմանված ներդաշնակեցված ստանդարտները անմիջապես, երբ դրանք արդեն հասանելի են և այդ նպատակով հրատարակվել են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում,

17) 2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն սույն Կանոնակարգը պետք է հստակեցնի համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգերը:

18) համապատասխանությունը ստուգելու համար արտադրողները պետք է տեղեկատվություն տրամադրեն 2005/32/ԵՀ հրահանգի V և VI հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում, եթե այդ տեղեկատվությունը վերաբերում է սույն Կանոնակարգով սահմանված պահանջներին,

19) բացի իրավական պարտադիր ուժ ունեցող պահանջներից սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակների համար լավագույն մատչելի տեխնոլոգիաների կողմնորոշիչ հենանիշերի սահմանումը պետք է նպաստի, որ տեղեկատվությունը լայնորեն մատչելի լինի:

Սա կարող է հետագայում նպաստել նախագծված լավագույն տեխնոլոգիաների ընդգրկմանը՝ զարգացնելով սույն Կանոնակարգի ենթակա արտադրատեսակների օգտագործման տարբեր փուլերում բնապահպանական տեսանկյունից արդյունավետությունը:

20) Այս միջոցառման վերանայումը պետք է մասնավորապես հաշվի առնի հատուկ նշանակության լամպերի վաճառքի զարգացումը՝ հավաստիանալով, որ դրանք չեն օգտագործվում լուսավորման ընդհանուր նպատակներով, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների, ինչպիսին են լուսարձակ դիոդները (LEDs), զարգացումը և Խորհրդի 92/75 հրահանգը կիրարկող Հանձնաժողովի 1998 թվականի հունվարի 27-ի 98/11/ԵՀ հրահանգով սահմանված «Ա» դասի էներգիայի արդյունավետության պահանջները կենցաղային լամպերի էներգիայի պիտակավորման առումով,

21) այս իրավական ակտով սահմանված պահանջները թույլ են տալիս, որ G9 և R7s ագույց օգտագործող հալոգեն լամպերը սահմանափակ ժամանակով մնան շուկայում՝ հաշվի առնելով առկա լուսատու պաշարների ծառայություններ տրամադրելու անհրաժեշտությունը՝ կանխելով սպառողների կողմից կատարվող ոչ պատշաճ ծախսերը և արտադրողներին ժամանակ տալով մշակել լուսատուներ, որոնք ավելի արդյունավետ լուսավորող տեխնոլոգիաներ կկիրառեն,

22) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 2005/32/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածի համաձայն հիմնված Կոմիտեի եզրակացությանը. ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն կանոնակարգը սահմանում է էկոնախագծմանը վերաբերող պահանջները կենցաղային ոչ ուղղորդված լամպերը շուկա ներմուծելու համար, ներառյալ երբ դրանք նախատեսված են ոչ կենցաղային օգտագործման համար կամ երբ դրանք դրվում են այլ արտադրատեսակների մեջ: Այն նաև սահմանում է հատուկ նշանակության լամպերի համար արտադրատեսակների մասին տեղեկատվության պահանջները:

Սույն Կանոնակարգով սահմանված պահանջները չեն կարող կիրառվել հետևյալ կենցաղային և հատուկ նշանակության լամպերի դեպքում:

(ա) Լամպերը, որոնք ունեն x և y հետևյալ լուսատվության կոորդինատները՝

- $x < 0,200$ կամ $x > 0,600$

- $y < -2,3172 x^2 + 2,3653 x - 0,2800$ կամ

- $y < -2,3172 x^2 + 2,3653 x - 0,1000$ կամ

(բ) ուղղորդված լամպեր

(գ) Լամպերը, որոնք ունեն լուսարձակման հոսք 60 լյումենից ցածր կամ 12000 լյումենից բարձր,

դ) լամպերը, որոնք ունեն՝

- 250-780 նմ ալիքի տիրույթում 250-400 նմ ալիքի տիրույթում 6 % կամ ավելի ընդհանուր ճառագայթում.

- 315-400 նմ (ՈԻՃ-I) կամ 280-315 նմ (ՈԻՃ-II) ալիքի երկարությամբ առավելագույն ճառագայթում.

(ե) ֆլուորեսցենտային լամպերը առանց համակցված բալաստի.

(զ) բարձր ինտենսիվության պարպումային լամպեր.

(է) Շիկացած լամպերը E14/E27/B22/B15 ցոկոլով, լարումը՝ 60վոլտ կամ դրանից ցածր վոլտով և 3-րդ հոդվածի համաձայն առանց 1-5-րդ փուլերում համակցված հոսանքափոխարիչի:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են 2005/32/ԵՀ հրահանգով սահմանված սահմանումները: Կիրառվում են նաև հետևյալ սահմանումները՝

1. «բնակելի շինությունների սենյակների լուսավորում» նշանակում է բնակելի շինությունների սենյակների լրիվ կամ մասնակի լուսավորում՝ փոխարինելով կամ լրացնելով բնական լույսը արհեստական լույսով՝ այդ տարածքում տեսանելիությունը բարելավելու համար

2. «լամպը» օպտիկական լուսարձակման աղբյուր է, որը սովորաբար տեսանելի է, ներառյալ ցանկացած լրացուցիչ բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են լամպը միացնելու, հոսանքը

մատակարարելու կամ լամպի կայուն աշխատանքի համար կամ օպտիկական լուսարձակման տեղաբաշխման, ֆիլտրման կամ փոխակերպման համար՝ եթե այդ բաղադրիչները չեն կարող հեռացվել առանց այդ միավորը անուղղելի կերպով վնասելու.

3. «բնակելի շինությունների լամպն» այն լամպն է, որը նախատեսված է բնակելի շինությունների սենյակների լուսավորության համար. այն չի ներառում հատուկ նշանակության լամպեր.

4. «հատուկ նշանակության լամպը» այն լամպն է, որը իր տեխնիկական պարամետրերի պատճառով նախատեսված չէ բնակելի շինությունների սենյակների լուսավորության համար կամ որովհետև արտադրատեսակին վերաբերող տեղեկատվության համաձայն այն չի կարող օգտագործվել բնակելի շինությունների սենյակների լուսավորության համար.

5. «ուղղորդված լամպն» այն լամպն է, որը նվազագույնը 80% լույս է արձակում π sr անկյան տակ (որը համապատասխանում է 120° անկյունով կոնի).

6. « ոչ ուղղորդված լամպը» այն լամպն է, որն ուղղորդված լամպ չէ.

7. «շիկացած լամպը» այն լամպն է, որի դեպքում լույսն արձակվում է թելանման հաղորդիչի միջոցով, որը էլեկտրական հոսանքի միջոցով տաքացվում է մինչև շիկացումը: Լամպը կարող է պարունակել կամ չպարունակել գազեր, որոնք ազդում են շիկացման գործընթացի վրա.

8. «շիկացած լամպը» շիկացած լամպ, որում շիկացման թելը գործում է վակուումային գնդի մեջ կամ շրջապատված է իներտ գազով.

9. «Վոլֆրամի հալոգեն լամպը» շիկացած լամպ է, որում շիկացման թելը պատրաստված է վոլֆրամից և պատված է հալոգեններով կամ հալոգենային միացություններ պարունակող գազով: Վոլֆրամի հալոգեն լամպերը սնուցվում են ինտեգրալային էլեկտրաէներգիայով կամ առանց դրա.

10. «պարպումային լամպ» նշանակում է լամպ, որում լույս է արտադրվում ուղղակիորեն կամ անուղղակիորեն էլեկտրական աղեղը պարպվելով գազի, գոլորշանման մետաղի կամ մի քանի գազերի ու գոլորշիների միջոցով.

11. «ֆլուորեսցենտային լամպ» նշանակում է սնդիկի պարունակությամբ ցածր ճնշման պարպումային լամպ, որի մեջ ֆոսֆորային մեկ կամ ավելի պատվածքները լույսի է փոխակերպում պարպումով արտադրված ուլտրամանուշակագույն ճառագայթման

էներգիան. Ֆլուորեսցենտային լամպը սնուցվում են ինտեգրալային էլեկտրաէներգիայով կամ առանց դրա.

12. «բալաստ» նշանակում է սարք, որն օգտագործվում է լամպի (լամպերի) հոսանքը սահմանված մակարդակին հասցնելու համար, եթե այն համակցված է հոսանքի մատակարարման և մեկ կամ ավելի պարպումային լամպերի հետ: Բալաստը կարող է ներառել նաև սնման լարումը փոխանցելու, լոյսի ուժը նվազեցնելու, հզորության գործակիցն ուղղելու միջոցներ և առանձին կամ գործարկման սարքի հետ միասին՝ ապահովելով լամպը (լամպերը) աշխատեցնելու համար անհրաժեշտ պայմաններ. Այն կարող է լինել լամպի մեջ կամ դրանից դուրս.

13. «էլեկտրաէներգիայի մատակարարողը» նշանակում է մի սարք, որը նախատեսված է փոխակերպելու այլընտրանքային.

14. «Կոմպակտ ֆլուորեսցենտային լամպը» նշանակում է մի միավոր, որը չի կարելի ապասարքավորել, առանց այն անուղղելի կերպով վնասելու՝ լամպի ցոկոլներով և ֆլուորեսցենտային լամպ ներառելով, ինչպես նաև ցանկացած լրացուցիչ բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են լամպը միացնելու և կայուն աշխատեցնելու համար.

15. «ֆլուորեսցենտային լամպ առանց համակցված բալաստի» նշանակում է միակ և կրկնակի հիմքով ֆլուորեսցենտային լամպ առանց համակցված բալաստի.

16. «Բարձր ինտենսիվությամբ պարպումային լամպ» նշանակում է էլեկտրապարպումային լամպ, որում էլեկտրական աղեղը կայունանում է պատի ջերմաստիճանով, և աղեղն ունի մեկ քառակուսի մետրի հաշվով երեք վատտը գերազանցող էլեկտրական լամպի պատ.

17. «Լուսարձակող դիոդ» կամ «ԼԱԴ» նշանակում է պինդ վիճակում գտնվող սարք, որը p-n անցմամբ, արձակում է օպտիկական ռադիացիա, երբ էլեկտրական հոսանքով է սնուցվում.

18. «ԼԱԴ լամպ» նշանակում է լամպ, որը ներառում է մեկ կամ մի քանի ԼԱԴ.

II-IV Հավելվածների նպատակներով, I հավելվածով սահմանված սահմանումները նույնպես պետք է կիրառվեն.

Հոդված 3

Էկոնախազձմանը ներկայացվող պահանջները

1. Ոչ ուղղորդված կենցաղային լամպերը պետք է համապատասխանեն II հավելվածով սահմանված էկոնախազձմանը ներկայացվող պահանջներին:

Էկոնախազձմանը ներկայացվող յուրաքանչյուր պահանջ պետք է կիրառվի հետևյալ փուլերին համապատասխան՝

Փուլ 1 | 2009 թվականի սեպտեմբերի 1

Փուլ 2 | 2010 թվականի սեպտեմբերի 1

Փուլ 3 | 2011 թվականի սեպտեմբերի 1

Փուլ 4 | 2012 թվականի սեպտեմբերի 1

Փուլ 5 | 2013 թվականի սեպտեմբերի 1

Փուլ 6 | 2016 թվականի սեպտեմբերի 1

Եթե պահանջը չեղյալ չի ճանաչվում կամ այլ բան չի նախատեսվում, ապա այն շարունակվում է կիրառվել ավելի ուշ փուլերում ներմուծված պահանջների հետ:

2. 2009 թվականի սեպտեմբերի 1-ից ի վեր

Հատուկ նշանակության լամպերի համար հետևյալ տեղեկատվությունը պետք է հստակորեն և մշտապես նշվի փաթեթի վրա և շուկայում ներմուծվող լամպերի մասին ցանկացած տեղեկատվության մեջ՝

(ա) դրանց նախատեսված նպատակը և

(բ) այն, որ դրանք հարմար չեն բնակելի շինությունների սենյակների լուսավորության համար:

Տեխնիկական փաստաթղթերը, որոնք համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով պատրաստվում են 2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն պետք է ներառեն տեխնիկական պարամետրերը (եթե այդպիսիները կան), որոնք լամպի նախագիծը յուրահատուկ են դարձնում փաթեթավորման վրա նշված հատուկ նշանակության համար:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը 2005/32/ԵՀ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկման ներքին համակարգն է կամ 2005/32/ԵՀ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:
2. 2005/32/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերի փաթեթը պարունակում է արտադրատեսակի մասին տեղեկությունների պատճեն, որը տրամադրվում է II հավելվածի 3-րդ մասի համապատասխան:

Հոդված 5

Ստուգման ընթացակարգերը շուկայի վերահսկողության նպատակներով

Երբ իրականացվում է 2005/32/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված շուկայի հսկողության գնահատում, անդամ պետությունների իշխանությունները պետք է կիրառեն սույն Կանոնակարգի III Հավելվածում նշված ստուգումների ընթացակարգերը սույն Կանոնակարգի II Հավելվածում սահմանված պահանջների դեպքում:

Հոդված 6

Կողմնորոշիչ հենանիշերը

IV հավելվածով սահմանվում են ներկայումս շուկայում առկա լավագույն արտադրողականություն ունեցող/նվազ էներգատար արտադրանքի ու տեխնոլոգիաների կողմնորոշիչ հենանիշերը:

Հոդված 7

Վերանայումը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան 5 տարի հետո Հանձնաժողովը վերանայում է այն տեխնոլոգիական առաջընթացի ներքո և այդ վերանայման արդյունքները ներկայացնում Խորհրդակցական համաժողով:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի մարտի 18-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Անդրիս Պիեբալզզ

Հանձնաժողովի անդամ

1] ՊՏ L 191, 22.7.2005թ., էջ 29:

2] ՊՏ L 37, 13.2.2003թ., էջ 19:

3] ՊՏ L 37, 13.2.2003թ., էջ 24:

4] ՊՏ L 71, 10.3.1998թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ I

II–IV հավելվածների իմաստով կարգավորվող տեխնիկական պարամետրերը և սահմանումները

1. ԷԿՈՆԱԽԱԳԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Սույն Կանոնակարգի պահանջների հետ համապատասխանության և համապատասխանության ստուգման նպատակներով ստորև նշված պարամետրերը սահմանվում են չափման հուսալի, ճշգրիտ և վերարտադրելի ընթացակարգերով, որոնք հաշվի են առնում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները:

(ա) «Լամպի արդյունավետություն»–ը արձակած ընդհանուր լուսարձակման ցուցանիշի՝ լամպի կողմից օգտագործած մուտքային հզորության հետ հարաբերակցությունն է, $\eta_{\text{lamp}} = \Phi / P_{\text{lamp}}$ (միավոր՝ր/վ). հոսանքը, որը ցրվում է չմիավորվող լրացուցիչ սարքավորումներով, ինչպիսին են բալաստները, հոսանքափոխադիչները կամ էլեկտրաէներգիայի աղբյուրները, չի ընդգրկվում լամպի կողմից օգտագործված էներգիայի մեջ,

(բ) «Լամպի լյումենի պահպանման գործակից» (LLՊԳ), որը օգտագործման որոշ ժամանակ լամպի լուսարձակման հոսքի հարաբերակցությունն է սկզբնական (100 ժամ) լուսարձակման հոսքին,

գ) «Լամպի օգտագործման գործակից» (LՕԳ), որը նշանակում է սահմանված պայմանների ներքո կոնկրետ ժամանակում աշխատող լամպերի ընդհանուր քանակի գործակիցը և փոխարկման հաճախականությունը,

(դ) «Լամպի շահագործման ժամկետ»–ը օգտագործման ժամանակահատվածն է, որից հետո աշխատող լամպերի ընդհանուր քանակի մասնաբաժինը սահմանված պայմաններով և փոխարկման հաճախականությամբ համապատասխանում է լամպի օգտագործման գործակցին,

(ե) «Քրոմատիկ/գունային», որը քրոմատիկության կորոդինատներով սահմանված կամ իր հիմնական կամ լրացուցիչ ալիքի երկարությամբ և մաքրությամբ միաժամանակ գրգռման ազդանշանի բնութագիր գույնն է,

(զ) «Լուսարձակման հոսք» (Φ), որը ճառագայթման հոսքից (ճառագայթման ուժգնությունից) է ծագում՝ գնահատելով ճառագայթումը մարդու տեսողական զգայունությամբ, չափելով լամպը 100 ժամ տևողությամբ վառած լինելուց հետո,

(է) «Փոխկապակցված գունային ջերմաստիճան» (Tc [K]), որը Պլանկի (սև մարմին) ճառագայթիչի ջերմաստիճանն է, որի կողմից ընդունվող գույնը նման է նույն պայծառությունն ունեցող խթանիչին և սահմանված տեսանելիության պայմաններին,

(ը) «Գունափոխանցում» (Ra), որը օբյեկտների գունային տեսքի վրա արձակած լույսի ազդեցությունն է գիտակցորեն կամ բնազդորեն համեմատվելով ստանդարտ լույս արձակող սարքի ներքո դրանց գույնի հետ,

(թ) «Հատուկ արդյունավետություն ունեցող ճառագայթային ուլտրամանուշակագույն էներգիա»-ն հանդիսանում է լամպի ուլտրամանուշակագույն ճառագայթման արդյունավետ էներգիա, որը չափվում է սպեկտրի ճշգրտման գործակցի համաձայն և առնչվում է լուսարձակման հոսքին (միավոր՝ mW/klm),

(ժ) «Լամպի աշխատանքի սկիզբը» այն ժամանակն է, որն անհրաժեշտ է, որ լամպը լիովին վառվի և մնա միացած էլեկտրամատակարարման լարումը մատակարարվելուց հետո,

(ժա) «Լամպի տաքացման ժամանակահատված» այն ժամանակահատվածն է, որն անհրաժեշտ է լամպի համար, որ այն միանալուց հետո սահմանված քանակությամբ կայուն լուսարձակման հոսքը արձակի,

(ժբ) «Հզորության գործոն», որը ակտիվ էներգիայի բացարձակ արժեքի և պարբերաբար պայմանների դեպքում լրիվ էներգիայի հարաբերակցությունն է,

(ժգ) «Լուսավորություն»-ը լույսի քանակությունն է, որը տեսանելի մակերևույթի յուրաքանչյուր միավորի վրա, արձակվում է որոշակի անկյան տակ և արտացոլվում է որոշ տարածքի վրա (միավորը՝ cd/m²),

(ժդ) «Լամպի սնդիկի պարունակություն»-ը լամպում առկա սնդիկի պարունակությունն է և չափվում է Հանձնաժողովի 2002/747/ԵՀ [1] որոշման հավելվածի համաձայն:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

(ա) «սահմանված արժեքը»-ը հատկորոշման նպատակով օգտագործվող արժեքն է, որը սահմանված է արտադրատեսակի գործունեության պայմանների համար: Եթե այլ բան նախատեսված չէ, բոլոր պահանջները սահմանվում են սահմանված արժեքներով,

(բ) «նոմինալ արժեքը» այն քանակային արժեքն է, որն օգտագործվում է արտադրատեսակը որոշելու և սահմանելու համար,

(գ) «Լամպի երկրորդ շերտը» արտաքին կողմից լամպի երկրորդ շերտն է, որն անհրաժեշտ չէ լույսի արտադրության համար, այն նման է արտաքին օդագոտու, որն ուղղված է լամպի վնասվելու դեպքում շրջակա միջավայր սնդիկի և ապակու արտանետման կանխմանը, ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանելու կամ լույսի ցրման համար,

(դ) «Թափանցիկ լամպ»-ը լամպ է, որի լուսավորությունը գերազանցում է 25000 cd/m²-ը 2000 lm-ից ցածր լուսարձակման հոսք ունեցող լամպերի դեպքում և գերազանցում է 100000 cd/m²-ը, ավելի մեծ քանակությամբ լուսարձակման հոսք ունեցող լամպերի դեպքում, որոնք ունեն միայն թափանցիկ արտաքին շերտ, որում լույս արձակող շիկացած թելը, ԼԱԴ-ը կամ պարպումային լամպանոթը պարզ երևում են,

(ե) «Ոչ թափանցիկ լամպ»-ը լամպ է, որը չի համապատասխանում (դ) կետում նշված հատկանիշներին, ներառյալ շիկացած կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերը,

(զ) «Փոխանջատման շրջան»-ը լամպի միացման և անջատման հաջորդականությունն է սահմանված ընդհատումներով,

(է) «Վաղ անսարքություն»-ը այն դեպքն է, երբ լամպը որոշ ժամանակ օգտագործվելուց հետո տեխնիկական փաստաթղթերում նշված ժամկետից շուտ դադարում է աշխատել,

(ը) «Լամպի ցոկոլ»-ը լամպի այն մասն է, որը էլեկտրական հոսանքին է միացնում ազույցի կամ լամպի միակցիչի միջոցով և հիմնականում նաև պահում է լամպը ազույցի մեջ,

(թ) «Լամպը պահելը» կամ «ազույց» նշանակում է մի սարք, որը լամպը պահում է անշարժ վիճակում, սովորաբար լամպի ցոկոլը դրա մեջ մտցնելով, որի ժամանակ լամպը նաև միանում է էլեկտրական հոսանքին:

1] ՊՏ L 242, 10.9.2002թ., էջ 44:

Ոչ ուղղորդված կենցաղային լամպերի համար էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

1. Լամպի արդյունավետությանը ներկայացվող պահանջները

S14, S15 կամ S19 ցուցանիշով շիկացած լամպերի վրա չեն տարածվում սույն Կանոնակարգի 3-րդ հոդվածով սահմանված 1-ից 4 փուլերի արդյունավետության պահանջները, սակայն ոչ 5 և 6-րդ փուլերի պահանջները:

Էլեկտրաէներգիայի թույլատրելի առավելագույն ցուցանիշը (P_{max}) տրված լուսարձակման հոսքի (Φ) համար նշվում է աղյուսակ 1-ում:

Այս պահանջների բացառությունները բերվում են աղյուսակ 2-ում և էլեկտրաէներգիայի թույլատրելի առավելագույն ցուցանիշին վերաբերող ճշգրտման գործոնները բերվում են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 1

Կիրառման ամսաթիվը | Էլեկտրաէներգիայի թույլատրելի առավելագույն ցուցանիշը (P_{max}) տրված լուսարձակման հոսքի (Φ) (W) համար

Թափանցիկ լամպեր | Ոչ թափանցիկ լամպեր |

1-ից 5 փուլեր | $0,8 * (0,88\sqrt{\Phi+0,049\Phi})$ | $0,24\sqrt{\Phi+0,0103\Phi}$ |

Փուլ 6 | $0,6 * (0,88\sqrt{\Phi+0,049\Phi})$ | $0,24\sqrt{\Phi+0,0103\Phi}$ |

Աղյուսակ 2

Բացառությունները

Բացառության շրջանակը | Թույլատրելի առավելագույն էլեկտրաէներգիա (W) |

Թափանցիկ լամպեր $60 \text{ lm} \leq \Phi \leq 950 \text{ lm}$ 1 փուլում | $P_{max} = 1,1 * (0,88\sqrt{\Phi+0,049\Phi})$ |

Թափանցիկ լամպեր $60 \text{ lm} \leq \Phi \leq 725 \text{ lm}$ 2 փուլում | $P_{max} = 1,1 * (0,88\sqrt{\Phi+0,049\Phi})$ |

Թափանցիկ լամպեր $60 \text{ lm} \leq \Phi \leq 450 \text{ lm}$ 3 փուլում | $P_{max} = 1,1 * (0,88\sqrt{\Phi+0,049\Phi})$ |

Թափանցիկ լամպեր G9 կամ R7s ցուցանիշով $60 \text{ lm} \leq \Phi \leq 950 \text{ lm}$ 6 փուլում | $P_{max} = 0.8 * (0,88\sqrt{\Phi+0,049\Phi})$ |

Աղյուսակ 3–ում նշված ճշգրտման գործոնները անհրաժեշտության դեպքում կուտակային են և կիրառվում են նաև այն արտադրատեսակների դեպքում, որոնց վրա տարածվում են աղյուսակ 2–ում նշված բացառությունները:

Աղյուսակ 3

Ճշգրտման գործոններ

Ճշգրտման շրջանակը| Թույլատրելի առավելագույն էլեկտրաէներգիա (W) |

Շիկացած լամպ, որի համար պահանջվում է էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուր | $P_{max}/1,06$ |

Պարպումային լամպ GX53 ցուլկով | $P_{max}/0,75$ |

Ոչ թափանցիկ լամպ, ≥ 90 and $P \leq 0,5 * (0,88\sqrt{\Phi}+0,049\Phi)$ ցուցանիշով գունափոխանցում | $P_{max}/0,85$ |

Պարպումային լամպ ≥ 90 and $T_c \geq 5000$ K ցուցանիշով գունափոխանցում | $P_{max}/0,76$ |

Ոչ թափանցիկ լամպ երկրորդ շերտով և $P \leq 0,5 * (0,88\sqrt{\Phi}+0,049\Phi)$ ցուցանիշով գունափոխանցում | $P_{max}/0,95$ |

ԼԱԴ լամպ, որի համար պահանջվում է էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուր | $P_{max}/1.1$ |

2. ԼԱՄՊԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի ֆունկցիոնալ հատկությունների պահանջները սահմանվում են աղյուսակ 4–ում, իսկ աղյուսակ 5–ում սահմանվում են լամպերի պահանջները՝ բացառությամբ կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի և ԼԱԴ լամպերի:

Երբ լամպի սահմանված շահագործման ժամկետը ավելի երկար է, քան 2000 ժ–ն, «լամպի օգտագործման սահմանված ժամկետ»–ի, «լամպի օգտագործման գործոնը», և «լուսավորության պահպանության» պարամետրերի 1–ին փուլի պահանջները 4–րդ և 5–րդ աղյուսակների դեպքում կիրառելի են միայն 2–րդ փուլից:

Փորձարկման նպատակներով մինչև աշխատանքը դադարեցնելը լամպի միանալու և անջատելու քանակը, փոխանջատման շրջանը բաղկացած է 1 ռոպե միացած և 3 ռոպե անջատված ժամանակահատվածներից, մինչդեռ փորձարկման այլ պայմանները սահմանվում են III հավելվածով: Լամպի շահագործման ժամկետը փորձարկելու նպատակներով, III հավելվածի համաձայն օգտագործվում են լամպի օգտագործման

գործակիցը, լուսավորության պահպանության և վաղ անսարքության սահմանումները, ստանդարտ փոխանջատման շրջանը:

Աղյուսակ 4

Կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի ֆունկցիոնալ հատկությունների պահանջները

Ֆունկցիոնալ հատկությունների պարամետր | Փուլ 1 | Փուլ 5 |

Լամպի օգտագործման գործոն 6000 ժ-ի դեպքում $\geq 0,50$ | $\geq 0,70$

Լյումենի պահպանություն 2000 ժ-ի դեպքում ≥ 85 % (≥ 80 % երկրորդ շերտ ունեցող լամպերի դեպքում) | 2000 ժ-ի դեպքում ≥ 88 % (≥ 83 % երկրորդ շերտով լամպերի դեպքում) | 6000 ժ-ի դեպքում ≥ 70 % |մինչև անսարքությունը փոխանջատման շրջանի քանակը| \geq ժամերով արտահայտված լամպի օգտագործման ժամանակահատվածի կեսը ≥ 10000 , եթե լամպի միանալու ժամանակը $> 0,3$ վ | \geq ժամերով արտահայտված լամպի շահագործման ժամկետը ≥ 30000 , եթե լամպի միանալու ժամանակը $> 0,3$ վ |

Միանալու ժամանակը | $< 2,0$ վ | $< 1,5$ վ եթե $P < 10$ W | $< 1,0$ վ եթե $P \geq 10$ W |

Լամպի տաքանալու ժամանակը 60 % Փ | < 60 վ. կամ < 120 վ. ամալգամ ձևով սնդիկ պարունակող լամպերի համար | < 40 վ կամ < 100 վ ամալգամ ձևով սնդիկ պարունակող լամպերի համար|

Վաղ անսարքության ցուցանիշ | $\leq 2,0$ % 200 ժ-ում | $\leq 2,0$ % 400 ժ-ում |

Ուճ-I + Ուճ-II ճառագայթում | $\leq 2,0$ mW/klm | $\leq 2,0$ mW/klm |

Ուճ-III ճառագայթում | ≤ 0.01 mW/klm | ≤ 0.01 mW/klm |

Լամպի հզորության գործոն | $\geq 0,50$ եթե $P < 25$ W | $\geq 0,90$ եթե $P \geq 25$ W | $\geq 0,55$ եթե $P < 25$ W | $\geq 0,90$ եթե $P \geq 25$ W |

Գունափոխանցում (Ra) | ≥ 80 | ≥ 80 |

Աղյուսակ 5

Լամպերի, բացառությամբ կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի և ԼԱԴ լամպերի ֆունկցիոնալ հատկությունների պահանջները

Ֆունկցիոնալ հատկությունների պարամետր | Փուլ 1 | Փուլ 5 |

Լամպի շահագործման սահմանված ժամկետը | ≥ 1000 ժ | ≥ 2000 ժ |

Լյումենի պահպանություն | $\geq 85 \%$, 75 % շահագործման սահմանված միջին ժամկետում | $\geq 85 \%$, 75 % շահագործման սահմանված միջին ժամկետում |

Փոխանջատման շրջանների քանակը | \geq լամպի շահագործման սահմանված ժամկետը չորսով բազմապատկած ներկայացված ժամերով | \geq լամպի շահագործման սահմանված ժամկետը չորսով բազմապատկած ներկայացված ժամերով |

Սկիզբը | $< 0,2$ վ | $< 0,2$ վ |

Լամպի տաքացման ժամանակը 60 % Φ | $\leq 1,0$ վ | $\leq 1,0$ վ |

Վաղ անսարքության ցուցանիշ | $\leq 5.0 \%$ 100 ժ-ում | $\leq 5.0 \%$ 200 ժ-ում |

Ուժ-I+ Ուժ-II ճառագայթում | $\leq 2,0$ mW/klm | $\leq 2,0$ mW/klm |

Ուժ-III ճառագայթում | ≤ 0.01 mW/klm | ≤ 0.01 mW/klm |

Լամպի հզորության գործոն | $\geq 0,95$ | $\geq 0,95$ |

3. Լամպերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջները

Ոչ ուղղորդված կենցաղային լամպերի դեպքում, հետևյալ տեղեկատվությունն է տրամադրվում 2-րդ փուլից, եթե այլ բան նախատեսված չէ:

3.1. Տեղեկատվությունը պետք է բացահայտորեն երևա փաթեթի ինչպես նաև անվճար ինտերնետային կայքերի վրա մինչև այն գնվի վերջնական սպառողների կողմից

Կարիք չկա, որ տեղեկատվությունը նշվի ստորև բերված ցուցակի ճշգրիտ բառերով: Այն կարող է ցուցադրվել գրաֆիկների, թվերի կամ սիմվոլների միջոցով տեքստի փոխարեն:

Տեղեկատվության այս պահանջները չեն վերաբերում շիկացած լամպերին, որոնք չեն բավարարում 4-րդ փուլում նշված արդյունավետության պահանջները:

(ա) Երբ լամպի նոմինալ էլետրաէներգիան ներկայացվում է 98/11/ԵՀ հրահանգով սահմանված էներգաարդյունավետության սահմաններից դուրս, լամպի նոմինալ լուսավորության հոսքը նույնպես առանձին է ներկայացվում էներգաարդյունավետության սահմաններից դուրս գտնվող լամպի նոմինալ էլետրաէներգիայի վերաբերյալ տվյալից նվազագույնը 2 անգամ ավելի մեծ տառաչափով:

(բ) Լամպի շահագործման նոմինալ ժամանակահատվածը՝ ժամերով (ոչ ավելի, քան օգտագործման սահմանված ժամանակահատվածը),

- (գ) Փոխանջատման շրջանների քանակը, մինչև լամպի վաղ անսարքությունը,
- (դ) գույնի ջերմաստիճան (նաև ներկայացված է կելվինով),
- (ե) Տաքացման ժամանակահատվածը մինչև լույսի լրիվ արձակման 60 % (կարող է ներկայացվել որպես «լրիվ լույս », եթե 1 վայրկյանից քիչ է),
- (զ) Զգուշացում այն մասին, որ լամպը չի կարող թուլացվել կամ կարող է թուլացվել միայն լույսը թուլացնող հատուկ սարքի միջոցով,
- (է) Եթե նախագծվել է ոչ ստանդարտ պայմաններում առավելագույն օգտագործման համար (ինչպիսին է նորմալ ջերմաստիճանը $T_a \neq 25 \text{ }^\circ\text{C}$),
- (ը) Լամպի պարամետրերը միլիմետրերով (երկարությունը և լայնությունը),
- (թ) Եթե փաթեթի վրա նշված է, որ շիկացած լամպի հետ նույնացում է երևում, շիկացած լամպի հզորությունը (միջինացված մինչև 1 W) համապատասխանում է փաթեթի մեջ պարունակվող 6–րդ աղյուսակում նշված լամպի լուսարձակման հոսքին,

Լուսարձակման հոսքի և նշված շիկացած լամպի հզորության միջանկյալ արժեքը (միջինացված մինչև 1W) հաշվարկվում է երկու հարակից արժեքների միջև գծային միջարկման միջոցով:

Աղյուսակ 6

Լամպի սահմանված լուսարձակման հոսք Φ [lm] | Նշված շիկացած լամպի հզորություն

CFL | Հալոգեն | ԼԱԴ և այլ լամպեր | [W] |

125 | 119 | 136 | 15 |

229 | 217 | 249 | 25 |

432 | 410 | 470 | 40 |

741 | 702 | 806 | 60 |

970 | 920 | 1055 | 75 |

1398 | 1326 | 1521 | 100 |

2253 | 2137 | 2452 | 150 |

3172 | 3009 | 3452 | 200 |

(ժ) «Էներգիա խնայող լամպ» տերմինը կամ լամպի արդյունավետության վերաբերյալ արտադրատեսակը գովազդելու նպատակով նկարագրող նմանատիպ այլ արտահայտությունը կարող է օգտագործվել միայն այն դեպքում, երբ լամպը համապատասխանում է արդյունավետության պահանջներին, որոնք վերաբերում են ոչ թափանցիկ լամպերին 1-ին փուլում, 1, 2 և 3 աղյուսակների համապատասխան,

Եթե լամպը պարունակում է սնդիկ

ի) լամպում X.X մգ սնդիկի պարունակությունը,

(լ) Հրահանգ, թե որ ինտերնետային կայքը ուսումնասիրել լամպի պատահական կոտրվելու դեպքում՝ ջարդված լամպի փշուրները հավաքելու վերաբերյալ ցուցումներ գտնելու համար:

3.2. Տեղեկատվություն, որը պետք է հրապարակայնորեն մատչելի դարձվի ինտերնետային կայքերից անվճար օգտվելու համար:

Նվազագույնը հետևյալ տեղեկատվությունն է տրամադրվում՝

(ա) 3.1. կետում նշված տեղեկատվությունը,

(բ) սահմանված հզորություն (0,1 W ճշգրտությամբ),

(գ) սահմանված լուսարձակման հոսք,

դ) լամպի շահագործման սահմանված ժամանակահատվածը,

(ե) լամպի հզորության գործոնը,

(զ) նոմինալ օգտագործման ժամանակահատվածից հետո լյումենների պահպանության գործոն,

(է) Սկիզբը (ինչպես X,X վայրկյաններ),

(ը) Գունափոխարկում,

Եթե լամպը պարունակում է սնդիկ,

(թ) Պատահաբար լամպի վնասվելու դեպքում ջարդված լամպի փշուրները հավաքելու վերաբերյալ ցուցումներ,

(ժ) Առաջարկություններ, թե ինչպես լամպը զցել այն օգտագործելուց հետո: -----

Ստուգման ընթացակարգը շուկայի վերահսկողության նպատակներով

Անդամ պետությունները հետազոտում են պատահականության սկզբունքով նույն արտադրողի նույն մոդելի առնվազն քսան լամպից բաղկացած խմբաքանակից վերացված նմուշը:

Խմբաքանակը համարվում է, անհրաժեշտության դեպքում, սույն Կանոնակարգի II հավելվածով սահմանված դրույթներին համապատասխանող, եթե խմբաքանակի միջին արդյունքները սահմանաչափից, շեմից կամ հայտարարված արժեքից չեն շեղվում 10 %-ից ավելի:

Հակառակ դեպքում, մակնիշը համարվում է չհամապատասխանող:

Պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով անդամ պետությունների իշխանությունները օգտագործում են ճշգրիտ ու վստահելի ժամանակակից չափման մեթոդներ, որոնք վերարտադրողական արդյունքների են հանգեցնում ներառում են՝

–երբ հասանելի է, ներդաշնակեցված չափանիշները, որոնց հղման թվերը բերվում են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում 2005/32/ԵՀ հրահանգի 9–րդ և 10–րդ հոդվածների համաձայն:

–հակառակ դեպքում հետևյալ փաստաթղթերում նշված մեթոդները՝

Չափման պարամետրերը | Կազմակերպում [1] | Հղում | Վերնագիր |

Լամպի սնդիկի բովանդակությունը | Եվրոպական հանձնաժողով | 2002/747/ԵՀ որոշում (Հավելված) | Հանձնաժողովի 2002 թվականի սեպտեմբերի 9–ի որոշումը, որը սահմանում է վերանայված էկոլոգիական չափանիշներ լուսանոթներն էկո–պիտակավորելու համար և 1999/568/ԵՀ որոշումը փոփոխելու համար: |

Լուսարձակման արդյունավետությունը | Սենէլեկ | EN 50285:1999 | Կենցաղային նպատակով օգտագործման համար էլեկտրական լամպերի էլեկտրականության արդյունավետությունը

Լամպի ցոլով | Սենէլեկ | EN 60061:1993 բոլոր փոփոխությունները մինչև A40:2008 | Լամպի ցոլուները և բռնիչները չափիչ սարքերի հետ 1–ին մասում՝ փոխկապակցվածության և անվտանգության հսկողության համար՝ Լամպի ցոլուներ

Լամպի շահագործման ժամկետ | Սենէլէկ | EN 60064:1995 փոփոխություններ A2:2003 A3:2006 A4:2007 A11:2007 | վոլթրամի շիկացած լամպ կենցաղային և նմանակերպ ընդհանուր լուսավորության նպատակներով՝ կատարման պահանջները

Սենէլէկ | EN 60357:2003 փոփոխություն A1:2008 | Վոլթրամի հալոգեն լամպ (ոչ սարքավորում) — կատարման պահանջները |

Սենէլէկ | EN 60969:1993 Փոփոխություններ A1:1993 A2:2000 | Ներկառուցված բալաստով լամպեր ընդհանուր լուսավորման ծառայություններ — կատարման պահանջները|

Լամպը միանալու ժամանակը/տաքանալու ժամանակը | Սենէլէկ | EN 60969:1993 Փոփոխություններ A1:1993 A2:2000 | Ներկառուցված բալաստով լամպեր ընդհանուր լուսավորման ծառայություններ — կատարման պահանջները|

Հզորության գործոն | Սենէլէկ | EN 61000-3-2:2006 | Էլեկտրամագնիսական համատեղելիություն (EMC) 3-2-րդ մաս Սահմաններ– Ներկա ներդաշնակ արտանետումների սահմանները (սարքավորման ընթացիկ հզորություն ≤ 16 յուրաքանչյուր փուլում) |

Հատուկ արդյունավետ ճառագայթում ուլտրամանուշակագույն հզորություն | Սենէլէկ | EN 62471:2008 | լամպերի և լամպային համակարգի ֆոտոբիոլոգիական անվտանգություն

Գունային փոխակերպում | Լուսարձակման միջազգային հանձնաժողով | CIE 13.3:1995 | Լուսային աղբյուրների գունային փոխակերպման միջոցների չափման ու որոշման մեթոդը|

Քրոմատիկ փոխկապակցված գունային ջերմաստիճան (Tc [K]) | Լուսարձակման միջազգային հանձնաժողով | CIE 15:2004 | գունաչափում |

Լուսավորություն| Լուսարձակման միջազգային հանձնաժողով | CIE 18.2:1983 | Ֆիզիկական լուսաչափության հիմքերը |

Լուսարձակման հոսք| Լուսարձակման միջազգային հանձնաժողով | CIE 84:1989 | Լուսարձակման հոսքի չափում|

Լամպի լյումենների պահպանության գործոն (LLMF) | Լուսարձակման միջազգային հանձնաժողով | CIE 97:2005 | ներսում էլեկտրական լուսավորության համակարգերի պահպանություն|

Լամպի օգտագործման գործոն (LSF)|

[1] Սենէլէկ: Շտասարդ փողոց/Շտասարտատրատ 35, B-1050 Բրյուսել, հեռ. CIE Կեզելզասե կենտրոնական բյուրո 27 A-1030 Վիեննա, Ավստրիա, հեռ. +43 1714 31 87 0 ֆաքս +43 1714 31 87 18 (<http://www.cie.co.at/>) ՀԱՎԵԼՎԱԾ IV

Ոչ ուղղորդված կենցաղային լամպերի համար էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

(ի գիտություն)

Սույն Կանոնակարգն ընդունելու պահին համապատասխան արտադրանքի շուկայում առկա լավագույն տեխնոլոգիաների հենանիշը հետևյալն էր՝

1. ԼԱՄՊԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանված ամենաբարձր արդյունավետությունը 69 lm/W.

2. ԼԱՄՊԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 7 ֆունկցիոնալ հատկությունների պարամետր | Կոմպակտ ֆլուորեսցենտային լամպեր|

Լամպի շահագործման ժամկետ | 20000 ժ |

Լյումենի պահպանություն | 90 % լամպի շահագործման սահմանված ժամկետում|

Փոխանջատման շրջանների քանակը | 1000000 |

Սկիզբը | < 0.1 վ |

Լամպի տաքացման ժամանակը մինչև 80 % Փ | 15 վ կամ 4 վ CFL/հալոգեն լամպերի համար հատուկ միախառնում

Լամպի հզորության գործոն |0,95 |

3. ՍՆԴԻԿԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՄՊՈՒՄ

Սնդիկի ցածր պարունակություն ունեցող կոմպակտ ֆլուորեսցենտային լամպերի էներգաարդյունավետությունը ներառում է ոչ ավելի քան 1.23 մգ սնդիկ: